ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 06.07.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1	Կապալառու կազմակերպության կողմից կանխավճար ստանալու վերաբերյալ ներկայացված գրությունը և Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն:
Փոփոխության նկարագրություն	Կնքվել է համաձայնագիր Պայմանագրի՝ 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից կանխավճար տրամադրելու վերաբերյալ:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

06.07.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 պայմանագրի

ք. Երևան 19 .12.2018թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ասրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 06.07.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 4.1 կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<4.1.1 Պայմանագրի՝ 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից մինչև **200 000 (երկու հարյուր հազար)** ՀՀ դրամի չափով՝ կանխավճարի ապահովման բանկային երաշխիք ներկայացնելուց հետո Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով՝ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ամբողջ գումարի չափով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք.Երևան, Վ.Վաղարշյան 21/28
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Վանաձոր>> մ/ճ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 11500030335003
Հ/Հ 900011011864	ՀՎՀՀ 00250424
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա.Ասրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՎԱՆԱՁՈՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ "ВАНАДЗОР"
"ARMBUSINESSBANK" CJSC
"VANADZOR" BRANCH

N 02-1712

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

«20» դեկտեմբերի 2018թ.

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է <ՀՀ քաղաքաշինության կոմիտեի> (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, ՀՎՀՀ 02565827) և <<ՏԵԽ. ԴՐԱՖՏ>> ՍՊԸ -ի (ք. Վանաձոր, Խորենացու 7/13, ՀՎՀՀ00250424)(այսուհետ՝ Պրինցիպալ) միջև սույն թվականին 06.07.2018թ.-ին կնքված Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման N ՀՀՔՊԿ-ԳՀՇՁԲ-18/10 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Սույն երաշխիքով բենեֆիցիար է համարվում ՀՀ Ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Բենեֆիցիար):

3. Երաշխիքով <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ <<ՎԱՆԱՁՈՐ>> մասնաճյուղը (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 200,000.00 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահանջելու Երաշխավորված պարտավորությունների խախտելու հիմնավորումը: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

4. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

5. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

6. Սույն Երաշխիքը ուժի մեջ է Երաշխիքի տրամադրման պահից և գործում է մինչև 20 հունիսի 2019թ.:

7. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու Երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, Երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, Երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում Երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Վանաձոր» մ/ճ կառավարիչ Ա. Սիմոնյան

Հաճախորդների սպասարկման և դրամարկղային գործառնությունների բաժնի պետ Ն. Առաքելյան

01500362 "ՎԱՆԱՁՈՐ" ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՖԻԼԻԱԼ "ВАНАДЗОР" "VANADZOR" BRANCH

Հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պող. 44; Հեռախոս՝ (+37460) 37 25 02; Էլ. փոստ՝ vanadzor@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: пр. Тигран Мец 44, г. Ванадзор, РА; Телефон: (+37460) 37 25 02; Эл. почта: vanadzor@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 44 Tigran Mets Ave., Vanadzor, Armenia; Telephone: (+37460) 37 25 02; E-mail: vanadzor@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am